ԳՐԱՖԻԿՈՍՈՒԹԻՒՆ, ԱՌՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ՄԱՋԱԴԻԱՅՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՄԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ

Ջավախք աշխարհում ծվարած փոքրիկ այս գյուղը գտնվում է Ախալքալակից 5 կմ դեպի հյուսիս-արեւելք: Համանուն փոքր գյուղից տարբերակելու համար 1595 թ. կազմված թուրքական հարկացուցակում բնակավայրը հիշատակվում է Մեծ Մաջադիա անվամբ՝ 18 տուն բնակչով: Հայաթափ է եղել ԺԸ. դարում:

1899 թ. դեկտեմբերի 19-ի երկրաշարժի հետեւանքով Մաջադիայի բնակելի 78 տնից 17-ը քանդվել է: Մաջադիայից Երկրորդ աշխարհամարտին մասնակցած 172 հոգուց 72-ը զոհվել է[1]: Գյուղի ներկայիս բնակիչների նախնիները՝ 29 ընտանիք, 1829-30 թթ. փոխադրվել են Էրզրումի Ումուտում գյուղից: Ումուտումը (այժմ Umudum) հայաբնակ գյուղ էր՝ Կարին (Էրզրում) քաղաքից 16 կմ հյուսիս: Այս գյուղից 1829-30 թթ. գաղթած բնակիչների մի մասը տեղակայվել է այդ ժամանակ հայաթափ ու ավերակ Աբուլ գյուղում[2]:

Ումուտում գյուղից են գաղթել նաեւ գյուղի բնակիչ Գարեգին Գրիգորյանի նախնիները: Գարեգինի հիշատակմամբ բնակության համար այս գյուղն ընտրվել է իր դիրքի համար, այսինքն՝ այժմյան Մաջադիա գյուղն ունի նույն դիրքն Ախալքալակի հանդեպ, ինչ Ումուտումը՝ Կարինի:

Մեր փնտրտուքների արդյունքում մաջադեցի Գարեգինի տանը գտանք մի Ավետարան, որը նա ժառանգել էր իր մորից, ամենայն հավանականությամբ, մայրն էլ իր հերթին ժառանգել էր քահանա պապերից: Գարեգինը հիշում է, որ եւ՛ մորական, եւ՛ հորական շավիղներից՝ իրենց տոհմում եղել են քահանաներ, եւ ենթադրելի է, որ Ավետարանը պետք է պատկաներ նրանցից մեկին: Մեծ սրբությամբ եւ զգուշությամբ էր պահել մայրն Ավետարանը՝ միշտ իր սրտի մոտ ունենալով, որ երբեւէ չկորչի եւ «թշնամու» ձեռքը չընկնի: Երկյուղածությամբ էր հիշում Գարեգինը. «մայրս երբեք չէր հանում ծոցից Ավետարանը, անգամ քնելիս իր մոտ էր պահում»:

Ձեռագրի պահպանման համար նպաստավոր պայմաններ չունենալու պատճառով՝ գրադաշտը եւ մանրանկարները տեղ-տեղ խունացած էին: Մագաղաթը խոնավությունից կուչ եկած էր:

Մագաղաթե այս Ավետարանը գրվել է Բաղեշում, գծագրվել եւ ծաղկվել է Սահակ քահանայի ձեռքով: Ավետարանի ստացողը նույն քաղաքի Մեսրոպ եպիսկոպոսն է:

---

1 Տես **Ա. Դավթյան**, Ջավախք, Երեւան, 1994, էջ 102:

2 Տես **Ս. Կարապետյան**, Ջավախք, Երեւան, 2006, էջ 30, 361-365:

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի հին ձեռագրերի ինստիտուտում են պահվում Սահակ քահանա Բաղիշեցու ձեռքով գրված, ծաղկված եւս մի քանի ձեռագրեր, որոնց հիշատակարաններից պարզ եւ հստակ հասկանալի է դառնում այն փաստը, որ Մաջաղիայի ձեռագիրը նույն Սահակ քահանայի ձեռքով է գրվել եւ ծաղկվել: Մատենադարանի թիվ 198, թիվ 5580 ավետարաններում եւ թիվ 9063 Ճառընտիրում հիշատակվում են նրա ծնողների անունները՝ Ստեփանոս եւ Շահում (կամ Շահումաղ), իսկ վերոնշյալ Ավետարանում եւ թիվ 198 Ավետարանում հիշատակվում է նրա դստեր՝ Հռիփսիմի անունը: Ինչ վերաբերում է թիվ 2691 ձեռագրին (Անանիա Սանահնեցի «Մեկնութիւն թղթոյն Պօղոսի»), ապա սրա միայն ծաղկողն ու կազմողն է Սահակ քահանան՝ «...եւ ՀԶ. (1627) Բաղիշեցի տէր Սահակ գրագիրն եկն վասն ուխտի ի Սուրբ Կարապետն եւ ի Սուրբ Առաքելքն: Եւ ես՝ նուաստ Կարապետս (գրիչը) արգելեցի եւ եդու **ծաղկել** եւ **կազմելոյ** ի յիշատակ հոգեւոր հօրն իմոյ՝ Բարսեղ վարդապետին եւ ծնօղաց նորին...» (253բ):

Վիեննայի թ. 66 «Վարք հարանց» ձեռագրում հանդիպում է մի հետաքրքիր հիշատակարան, որն ամբողջությամբ չի տպագրված ձեռագրացուցակում. «...Եւս առաւել յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթսն ձեր եւ զՏէր Սահակն, որ բազում աշխատությամբ ուսոյց զարուեստս» (թ. 88ա)[3]: Ըստ այս եւ Մաշտոցի անվան Մատենադարանի թ. 9063 ձեռագրի հիշատակարանների կարող ենք եզրակացնել, որ Սահակ քին. Բաղիշեցին ունեցել է աշակերտներ, որոնց ուսուցանել էր: Թ-իվ 9063 ձեռագրում հիշատակվում են նրանց անունները՝ «զտէր Նիկողոսն եւ զՍտեփանոս դպիրն եւ զԴաւիթն» (թ. 382ա): Իսկ Սահակ Բաղիշեցին աշակերտել էր Տէր Ներսէսին եւ տէր Յովանէսին՝ «զուսուցիչն իմ՝ զտէր Ներսէսն եւ զվարպետն իմ՝ զտէր Յովանէսն Յիզանցի» (թ. 9063, թ. 382ա):

Երուսաղեմի ձեռագրացուցակների Զ. հատորում եւս հիշատակվում է մի ձեռագիր, որը գրված եւ ծաղկված է Մեսրոպ եւ Սահակ Բաղիշեցիների ձեռքով, 1643 թվին Բաղեշում: Ավետարանն իր ավարտին չհասցրած մահացել է Սահակ քին. Բաղիշեցին. «...Դարձեալ կրկին աղաչեմ յիշել ի Տէր զտէր Սահակ վարպետն եւ զանարժան Մեսրոպա յեպնեալս, որ եմք Բաղիշեցի եւ սկսեալ զՍուրբ Աւետարանս ի միասին գրեցաք եւ ծաղկով զարդարեցաք, եւ նա փոխեցաւ առ Քրիստոս ոչ ժամանեաց գալ, վասն որոյ բերեալ իմ զսա ի Սուրբ յԵրուսաղէմ, եդի ի յիշատակ ի դուռն Սուրբ Յակոբայ, վասն որոյ մերոց փրկութեան. ամէն» (693բ)[4]:

Սույն ձեռագրացուցակի Ե. հատորում վկայակոչված է մի Սաղմոսարան (թ. 1651), որը եւս գրվել է Բաղեշում 1623 թվականին, եւ ծաղկվել է Սահակ կրոնավորի ձեռքով, սակայն վերջինիս ծնողների անունները՝ Հակոբ եւ Մարիամ, տարբեր են Սահակ քին. Բաղիշեցու ծնողների անուններից՝ Ստեփանոս եւ Շահում:

ԷԼՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

3 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Միխիթարեան Մատենադարանին ի Վիեննա», հ. Ա., Վիեննա, 1895, էջ 294:

4 «Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց», կազմեց՝ Նորայր եպս. Պողարեանը, հ. Զ., Երուսաղէմ, 1972, էջ 543-544, հ. Ե., Երուսաղէմ, 1971, էջ 477:



Աւետարան

Բաղէշ ՌՂ - 1641

Գրիչ, ծաղկող՝ Սահակ քհն. Բաղիշեցի: Ստացող՝ Մեսրոպ եպս. Բաղիշեցի:

Թերթ՝ 258, չգրուած՝ 1աբ, 2ա, 13բ, 14ա, 15բ, 90ա, 131ա, 258բ: Պրակ՝ 1x12+Ա-Իx12+2x4 (Ա13, ԺԹ13): Նիւթ՝ մագաղաթ: Մեծութիւն՝ 10.5x7.5: Գրութիւն՝ երկսիւն, միասիւն (8x5): Գիր՝ բոլորգիր: Տող՝ 20-24: Կազմ՝ մուգ շագանակագոյն դրոշմազարդ կաշի՝ դռնակով եւ երկու արծաթէ շղթայաձեւ կապիչներով, միջուկը՝ տախտակ, աստառը՝ Ա փեղկին մագաղաթ, Բ փեղկին՝ թուղթ, դռնակինը՝ ոսկեգոյն մետաքս: Ա եւ Բ փեղկերի կենտրոններում արծաթէ հաւասարաթեւ խաչ՝ ականակուռ, անկիւններում արծաթէ զարդանախշ՝ ականակուռ, Ա փեղկին՝ 20 քար, 4 հատն ընկած, Բ փեղկին՝ 17 քար, 7 հատն ընկած (կարմիր, մուգ կանաչ, փիրուզագոյն քարեր): Ա փեղկի ներքեւի մասից արծաթէ շղթայ՝ ծայրին արծաթէ խաչ (հաւանաբար էջանիշ է ծառայել):

<u>Մանրանկարչութիւն</u> –Յիսուս Քրիստոս՝ 14բ, Մարիամ Աստուածածին՝ 15ա, Մատթէոս՝ 16բ, Մոգերի երկրպագութիւնը՝ 19ա, Պայծառակերպութիւն՝ 58ա, Մուտք Երուսաղէմ՝ 66բ, Խաչելութիւն՝ 85բ, Թաղում՝ 87ա, Իւղաբեր կանայք՝ 88ա, Մարկոս՝ 90բ, Մկրտութիւն՝ 92ա, Ղուկաս՝ 131բ, Աւետումն՝ 134ա, Ընծայումն ի տաճարն՝ 138բ, Համբարձումն՝ 199բ, Յովհաննէս եւ Պրոխորոն՝ 200բ, Յարութիւնն Ղազարու՝ 230ա, Ոտնլուայ՝ 236ա, Հոգեգալուստ՝ 237բ: Ի լուսանցս՝ 37բ՝ Կոյրք երկուք, 39բ՝ ոչխար, 115ա՝ կոյր Բարտղուսմիէոս, 129ա, 196ա, 251ա՝ Յովսէփ Արիմաթացի, 181բ՝ բժշկութիւնն կոյրի, 202բ, 222ա՝ Գառն Աստուծոյ, 203ա՝ Յովհաննէս Մկրտիչ, 223բ՝ բժշկութիւնն ի ծնէ կոյրի, 226բ՝ հովիւ: <u>Խորան</u>՝ 2բ-7ա: <u>Կիսախորան</u>՝ 17ա, 91ա, 132ա, 201ա: <u>Լուսանցազարդ</u>՝ բուսական, թռչնային, տաճար, ծառ: <u>Զարդագիր</u>՝ հրեշտակագիր, թռչնագիր, կենդանագիր, հանգուցագիր: <u>Գոյներ</u>՝ ոսկի, կապոյտ, դեղին, մուգ կանաչ, երկնագոյն, կարմիր, դարչնագոյն, նարնջի:

Վիճակ՝ բաւարար. գրադաշտը խոնաւութիւնից խունացած, տեղ-տեղ ցեցակեր:

Բովանդակութիւն

1. 2բ-3ա Թուղթ Եվսեբեայ:

2. 3բ-7ա Համաբարբառ, նաեւ՝ ի ստորին լուսանցս:

3. 7բ-13ա Ցանկ Աւետարանների:

4. 16ա Նախադրութիւն Մատթէոսի: 17ա-89բ Աւետարան Մատթէոսի:

5. 89բ Նախադրութիւն Մարկոսի: 91ա-130բ Աւետարան Մարկոսի:

6. 130բ Նախադրութիւն Ղուկասու: 132ա-200ա Աւետարան Ղուկասու:

7. 200ա Նախադրութիւն Յովհաննու: 201ա-254բ Աւետարան Յովհաննու: 255աբ Իրք կնոջն չնացելոյ:

Յիշատակարան գրչութեան ժամանակի

1. 14բ Ո՛վ Մայր եւ Կոյս, կատարեսցին հարցուածք քո եւ վասն աղաչանացդ ողորմեցայց հաւատացելոց: /15ա/ Յաւուրն ահագին [Աստուծոյ առա]ջին, ողորմեա Սահակ գրչիս, Մեսրոպ ստացողին:

2. 15ա Աղաչեմ ըզՄիածինըդ Հօր եւ աղախնոյ քո, ողորմեա Մեսրոպին:

3. 256ա Փա՛ռք անսղբնականին եւ սկզբանն ամենայնի, անեղին եւ գոյացուցչին բնաւից, անվախճան եւ անսահման էացուցչին, սահմանիչ եւ կատարումն բոլոր էիցս, երից միակին, եզակի եւ միում աստուածութեանն գոհութիւն եւ անդադար փառաւորութիւն այժմ եւ անգրաւ յաւիտենիւ. ամէն: Որ ետ կարողութիւն տառապեալ եւ մեղսամած Սահակ գրչի Բաղիշեցոյ հասանել յաւարտ լուսազարդ եւ քառաբուխ Սուրբ Աւետարանիս, որ ունի զօրինակ եւ զնմանութիւն չորս գետոցն եդեմաբուխ, որ առոգանեն զդրախտն եւ զերկիր, որ նշանակ է Փիսոն՝ զՄաթէոս, եւ Գեհոն՝ զՄարկոս, Տիգրիս՝ զՂուկաս, եւ Եփրատէս՝ զՅոհաննէս: Որ սոցին գոլով նմանապէս թվով ուռճացեալք ի կենդանական աղբերէն առոգանեն զպասքեալ միտս մարդկային բնութեանս, ի չորս

կողմ աշխարհիս՝ յարեւելս եւ յարեւմուտս, ի հիւսիս եւ ի հարաւ: Նոյն աւրինակ ըստ տեսութեան Եզեկիէլի քառակերպեան աթոռոյ, /256բ/ որ նշանակ էր մարդն՝ զՄաթէոս, եւ առիւծն՝ զՄարկոս, եզն՝ զՂուկաս, եւ արծիւն՝ զՅոհաննէս: Յորս զմի փառաց թագաւորն Քրիստոս, փառակիցն Հաւր եւ Հոգոյն Սրբոյ, որ էառ զմեր բնութիւնս ի սրբոյ Կուսէն միաւորեալ ընդ իւրում աստուածութեանն եւ քարոզի ընդ ամենայն տիեզերս, քառակի Աւետարանաւ մինչեւ ի կատարած աշխարհի զաստուածախօս վարդապետութիւն դրոշմեալ զսակաւ ի բազմացն առ ի հաւատալ, եթէ Յիսուս Քրիստոս է Որդի Աստուծոյ ըստ վեհին ընդ Հաւր հաւատալ եւ զկեանսն յաւիտենականսն ընդունել յանուն նորա, ուստի եւ տեսեալ զսորայս փրկագործութենէ խորհուրդն սրբասէր եւ աստուածահաճոյ վարդապետն տէր Մեսրոպայ եպիսկոպոսն եւ մեծաւ տենչմամբ ետ գրել զՍուրբ Աւետարանս ի վաելումն անձին իւրոյ եւ յիշատակ բարի իւր եւ զուգակցին իւրոյ՝ Հռիփսիմին, որ տղայ հասակաւ փոխեցաւ առ Քրիստոս Աստուած յոյսն ամենայնի, քանզի սրբազան վարդապետս այս Մեսրոպ է՛ր /257ա/ քաղաքաւ Բաղիշեցի, ի մեծ ազգէ եւ ի մանկութենէ զսրբութիւն սիրեալ յուսման գրոց հետեւեալ, եղեւ ճարտար քարտուղար եւ ամենայն ուսմամբ եւ լցեալ ի շնորհաց Սուրբ Հոգոյն, ըստ աւրինի ամուսն առաւ եւ Բ ամ կացեալ ընդ անբիծ ամուսնոյն իւրոյ կուսութեամբ հարկեալ ի բազմաց կոչեցաւ յաստիճան եւ ընկալաւ զպատիւ քահանայութեան, զոր ըստ երից ամսոց ձեռնադրութեանն եհաս վախճան լծակցին իւրոյ տարաժամ մահւամբ եւ ինքն ըստ բազմայունար տենչման իւրոյ կամէր գնալ յանապատ եւ խաղաղական կեանս ըստանալ, զոր ի մանկութենէ զայն կայր եւ իմացեալ քաղաքացոցն ոչ թողին, այլ վկայական թղթով յուղարկեցին առ սրբազան կաթողիկոսն տէր Փիլիպպոս ի Սուրբ Էջմիածինն եւ ի նմանէ ընկալաւ պատիւ արքեպիսկոպոսութեան եւ գաւազան եւ իշխանութիւն վարդապետական եւ եկեալ նըստաւ յաթոռն իւր առաջնորդ քա /257բ/ ղաքին Բաղիշու՝ հովուել զհօտն Քրիստոսի եւ բազում վշտաց տարեալ եւ նեղութեանց համբերեալ եւ զչարչարանս Քրիստոսի յանձին կրեալ, որ եւ նորին սիրովն ցանկացեալ սրբալոյս Աւետարանիս պահել ընդ ինքեան աւժանդակ ի քարոզութիւնս եւ մխիթարիչ ի վշտաց, ի

տրամութեանց եւ բազում կարօտիւ թաղանձեաց զտառապեալ Սահակ գրիչս առ ի գծել զսա եւ ի զտըկարութիւն ի բաց եդեալ վասն սիրոյ նորին եւ խնդրոյն, բազում վշտօք գծեցի ի դառն ժամանակիս ի թվականիս հայոց ի ՌՂ. (1641) ամի եւ ծաղկեալ զարդարեցի իւրով ձեռտուութեամբն հոգեւոր որդոյն իմոյ՝ Մեսրովպ վարդապետին ի վայելումն իւր եւ յիշատակ բարի հոգոյ իւրոյ եւ ծնօղաց իւրոց՝ Աւետսին եւ Ազամթին եւ լրծակցին իւրոյ՝ Հռիփսիմին եւ ամենայն արեանառու մերձաւորացն իւրոց, որք հանդիպիք յիշեցէք եւ Աստուած ողորմի ասացէք եւ Տէր Աստուած յիշողացդ եւ յիշեցելոցս ողորմեսցի եւ մեղաց թողութիւն շնորհեսցէ ի փառս անուան իւրոց. ամէն:

/258ա/ Արդ, ես՝ յետինս ի գրչաց եւ բազմամեղս ի կարգաւորաց Սահակ սուտ եւ լոկ անուամբ քահանայ եւ ունայն յամենայն բարեաց վիրաւորեալ նետիւք բանսարկուին, երես ի գետին եդեալ եւ արտասուաթոր դիմօք խնդրեմ ի ձ[եզմէ], զի բոլոր սրտիւ Աստուած ողորմի ասէք եւ մեղաց թողութիւն խնդրէք, ինձ՝ անարժանիս, եւ ծընօղաց իմոց եւ ամենայն մերձաւորացն, նաեւ կողակցին իմոյ եւ դստերցն՝ Հռիփսիմին, որդոցն եւ Աստուած զձեզ յիշէ յիւր անճառ [գալստ]եանն. ամէն:

(258ա, ստացողի) Արդ, ես՝ Մեսրոպ սուտ անուամբ եւեթ վարդապետ, անգետ եւ անարժան ի կարգս եկեղեցոյ ըստացայ զՍուրբ Աւետարանն ի մխիթարութիւն անարժանութեան, յիշատակ հոգոյ իմոյ եւ ծնօղաց, կողակցին իմոյ, վասն որոյ երես եդեալ երկրի մոխրամած դիմօք խնդրեմ ի հանդիպողացդ յիշել առ Տէր եւ մեղաց թողութիւն խնդրել եւ անպատկառ մընալ ի վերջին աւուրն եւ ողորմութենէ արժանաւորիլ, եւ Տէրն Քրիստոս Աստուածն ամենայնի ձեզ եւ մեզ ողորմեսցի. ամէն:

Յիշատակարան յետագայի

1. 131ա (1799, բոլորգիր) Ես՝ տէր Սարգիս, կարք առի թվին ՌՄԽԸ. (1799) ին, տնտեսի կիրակին:

131ա (1801, բոլորգիր) Թվին ՌՄԾ. (1801) ամին:

Գրչափորձ՝ 2ա՝ սուրբ Նեհսէս յահապետ
Յիշատակ է սուրբ Աւետարանս: